

ընդունելի եղեն, որպէս տեսաք վերագոյն⁷⁰: Ընդալի էր յոյժ գտանել զայս աղերս Լեւոնի եւ զպատասխանի Քահանայապետին (Կելեստինոսի Գ), յորոց՝ ՚ի վերայ հասանէաք ստուգիւ պայմանաց կամ դաշանց եղելոց ՚ի միջի իւրեանց, կամ պահանջանաց զահուն Հռովմայ եւ խոստմանց կաթողիկոսին, որ էր յայնժամ խոհական ծերունին Գրիգոր Ապիրատ: Որպէս պատմիչք մեր՝ վկայեն եւ օտարք, զի եղեն եւ եղան այսպիսի պայմանք ՚ի վերջին ամս ԺԲ դարու, եւ թէ վասն յանձնառութեանն Հայոց՝ հաճեցաւ Քահանայապետն ընդ թագաւորել Լեւոնի, եւ պարգեւեաց նմա դրօշ. եւ սորա ճիգն եւ ջան մեծ եղել՝ հաւանեցուցանել զիւրսն յընդունելութիւն պայմանացն, քան յայլ ձեռնարկս իւր. առ որ զօրավիզն մեծ եղեն նմա՝ կանխեալ ընտելութիւնք կաթողիկոսաց եւ Ներսէսի Լամբրունեցոյ, եւ թղթակցութիւնքն եւ ընծայաբերութիւնք ՚ի Հռովմայ:

Կիրակոս պատմիչ մեր՝ որ իբր եօթանասուն ամօք յետոյ գրէր, եւ ՚ի հեռաւոր վայրի, եւ ըստ համբաւուց, խառնէ զստոյգ եւ զանստոյգ, զճահաւոր եւ զանճահ. Ներսէս Պալիենց՝ իբր դարու միով եւս զկնի, եւ այլք ոմանք, հարեանցի բանիք ցուցանեն՝ պահանջեալ Ս. Գահուն ՚ի Հայոց՝ այսպիսի ինչ. **Ա.** զմեծամեծ տօնս տօնել հաստատուն ըստ աւուրց ամսոց, ըստ սովորութեան լատին եկեղեցոյ. որով իմանալի է զգլխաւորսն, զԾննդեան Տեառն եւ որոց ընդ նմին կապակցեալ են. – **Բ.** ոչ լուծանել զպահս ճրագալուցի Ծննդեան եւ Յարութեան Տեառն՝ կթեղիսօք, այլ միայն ձիթով եւ ձկամբ. – **Գ.** զկարգս ժամուց պաշտաման կատարել ՚ի ներքս յեկեղեցոջ, եւ ոչ արտաքոյ, «զոր ՚ի վաղուց հետէ ոչ առնէին Հայք (ասէ Կիրակոս) ՚ի հինահարութեանց Իսմայելի, բայց միայն ՚ի ժամ խորհրդածութեան պատարագին». – **Դ.** (ըստ ոմանց), կարգել յերկրի տէրութեան Լեւոնի ուսումն լատին լեզուի, եւ վարժել զմանկունս

⁷⁰ «Իբրեւ ետես (Լեւոն, ասէ Կիրակոս), եթէ յաջողեցաւ նմա տէրութիւնն առաւել քան զնախնիսն իւր, խորհեցաւ այնուհետեւ ընդ իշխանսն իւր եւ ընդ մեծամեծս՝ թագաւորել. եւ առաքեաց ՚ի տիեզերահոչակ քաղաքն Հռովմայեցոց առ ինքնակալ կայսրն եւ առ Պապն, զի տացէ նմա հրաման եւ թագ թագաւորական. զի ոչ կամեցաւ նա այլում հնազանդել վասն թագի՝ բայց թէ ազգին Փռանկաց. միանգամայն եւ պարծանս իւր վարկաւ զՍուրբ Առաքելաւ Պետրոս եւ Պօղոս՝ որ կան ՚ի Հռովմ քաղաքն, որպէս թէ ՚ի նոցունց առեալ զօրհնութեան պսակն: Եւ առաքեն նմա կայսրն եւ Պապն Հռովմայեցոց՝ թագ ազնիւ՝ զառաջին թագաւորացն, եւ արծուէս մի պատուաւոր, այս ինքն արքեպիսկոպոս մի, դնել զթագն ՚ի գլուխ նորա, երիս իրս պահանջեալ ՚ի նմանէ» եւ այլն: